

891.99

p-95



31
2. ԹՈՒՄՅԱՆ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ

— Կ Ա Մ —

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ
ՎԵՐՍԱԼԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

Ս. ԳԻՅՈՒՄՅԱՆ 1 զործողութիւնը

Վ. Ա. Ղ. Ա. Ր. Շ. Ա. Պ. Ա. Տ.

1925.

6 NOV 2011

894.99

p-95

uaw.

Պաշտոնական բոլոր յերկրների, միացե՛ք.

Հ. ԹՈՒՄՅԱՆ

109

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ

===== ԿԱՄ =====

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ՎԵՐՍԱԼԻ

ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

Ազիտ-այիես 1 գործողությամբ

(Գրված է 1921 թ. նոյեմբերին)

1001
1594

23.04.2013

31922

Քաղաքապետարանի կողմից թույլատրված է
բեմադրության

№ 4. 24/IV—1925 թ.

Տիրաժ 600

Պետերատի առաջին տպարան վաղարշապատում

ՆՎԻՐՎՈՒՄ Ե

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՆ. ԿՈՄ. ՅԵՐԻՏ.

ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ—

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԱՊԱԳԱ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

1. ԿԼԵՄԱՆՍՈՒ, Կոնժերանսի նախագահը
2. ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
3. ԼԼՈՅԻ ԶՈՐԶ
4. ՎԻԼՍՈՆ
5. ԲԵԼԳԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻԶ
6. ԻՏԱԼԻԱՅԻ »
7. ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ
8. ԶՈՊԱՆՅԱՆ
9. ԱՀԱՐՈՆՅԱՆ
10. ՓԱՓԱԶՅԱՆ
11. ՄԵԼԻԻՔ ՇԱՀԱԶԱՐՅԱՆ
12. ՍՊԱՍԱՎՈՐ
13. Այլ պետությունների ներկայացուցիչներ, ֆարտուղարի ոգնականներ:

Շեղ զահլին յերկու դոնեռով, վորոնցից մեկը մուտն է, իսկ մյուսը տանում է դեպի հեռախոսի սենյակը: Ձախ կողմում դրված է նախագահի սեղանը, իսկ նրանից ձախ՝ ամբիոն հռետորների համար: Աջ պատի յերկարությամբ դասավորված են ներկայացուցիչների աթոռները. նրանց առաջ դրված է կարմիր մահուղով ծածկված մի յերկար սեղան, վորի մեջտեղում, մարդկային մի քանի գանգերից բաղկացած պատվանդանի վրա, զետեղված է մի մեծ գլոբուս: Խորքում, դեպի աջ, դրված են յերեք սեղաններ՝ գլխավոր ֆարտուղարի ու նրա յերկու ոգնականների համար: Աջ պատից կախ է արած պատի մեծ ժամացույց:

ՏԵՍԻԼ Ա.

ԿԼԵՄԱՆՍՈՒ, ԳԼԽ. ՔԱՐՏՈՒՂԱՐ

Կլեմանտնոն նախագահական սեղանի մոտ սառտիկ զբաղված է թղթերով: Գլխ. ֆարտուղարը նույնպես ըզբաղված է թղթերով: Փարտուղարի ոգնականները գրում են:

ԿԼԵՄԱՆՍՈՒ (նայելով պատի ժամացույցին). Պարոն քարտուղար, հաճեցեք հայտնել դաշնակից պետությունների ներկայացուցիչներին, վոր կոնֆերանսի առաջին նիստը բացվելու յե ճիշտ ժամի 10-ին:

(ԳԼԽ. ՔԱՐՏՈՒՂԱՐԸ իսկույն անցնում է հեռախոսի սենյակը: Լսվում է հեռախոսի զանգի ձայնը, ապա ֆարտուղարի խոսքերը. «Այո, հայտնեցեք հյուրընկալ հանձնաժողովի նախագահին, վոր կոնֆերանսի առաջին նիստը սկսվելու յե ուղիղ ժամի 10-ին: Նորին գերազանցություն պարոն նախագահը խնդրեց իմաց տալ այդ մասին դաշնակից պետությունների ներկայացուցիչներին... Այո, այո, խնդրեմ...»): Փարտուղարը ներս է գալիս յեվ բռնում իր տեղը:

ԿԼԵՄԱՆՍՈՒ. Պարոն քարտուղար, որակարգէ՛ արդեն կազմված է:

Գ. ՔԱՐՏՈՒՂԱՐ. Այո, Ձերդ գերազանցություն, ճիշտ այն կարգով, ինչ կարգով կազմել հրահանգված է: ԿԼԵՄԱՆՍՈՒ. Հաճեցեք կարդալ:

Գ. ՔԱՐՏՈՒՂԱՐ (թղթերի միջից հանում է որակարգւ-կադրում է բարձրաձայն). Գերմանիայի ղեկավար-փության խնդիրը. Գերմանիայի գաղութները դաշնակիցների մեջ բաժանելու խնդիրը. Գերմանական մետրոպոլիայից հոգուտ դաշնակիցների պոկվելիք հողամասերի խնդիրը. Գերմանի-յից պահանջվելիք կոնսուլներուցիայի և զնանների հատուցման խնդիրը. Գերմանիայի առևտրական նավատորմը խելու, իսկ ռազմականը վոչնչացնե-լու. խնդիրը. Գերմանիայում քարածուխ և յեր-կաթ խալառ չթողնելու խնդիրը. Գերմանացի գերիներին դաշնակից յերկրներում ստրկական աշխատանքների լծելու խնդիրը. Գերմանիայից 600 հազար գլուխ խոզ, 900 հազար գլուխ կով, 500 հազար գլուխ վոչխար, 700 հազար հատ ձի և նույնքան ջորի պահանջելու խնդիրը, Գերմանիայից...

ԿԼԵՄԱՆՍՈՒ (ընդհատելով յեվ բավականությամբ օփե-լով ձեռքերը. կանգնած). Բավական է: Որա-կարգը կազմված է հիանալի, տրված հրահան-գին միանգամայն համաձայն... Այո, այո, Գերմանիային պետք է այնպես անել, վոր նա հա-ըյուր տարի շնչել չկարողանա, վոր նա ուժ չու-նենա այլևս մրցելու մեզ հետ և մեր շուկաները խելու մեր ձեռքից... (Կարճ պառզա: Անցու-

ղարձ է անում. մտահոգված է). Սակայն, ինչպես ազատվել այն խնդիրներից, վորոնք թեպետև վոչ մի առնչություն չունեն մեր շահերի և մեզ զբաղեցնող քաղաքական խնդիրների հետ, բայց և այդպես շարունակում են գլխացավանք պատ-ճառել... Եթե, Վիլսոն, Վիլսոն... ախր ի՞նչ կարիք կար մանր ազգերի, ճնշված ժողովրդների ազա-տության մասին հայտարարություններ անել... Նրանց զանազան խոստումներ տալ... Բայց, չե, չե, այդ հայտարարությունները, այդ խոստում-ները պատերազմի ժամանակ անհրաժեշտ եյին, խիստ անհրաժեշտ... հա, հա, հա... և ինչպես այդ ժողովրդի տխմար ղեկավարները հավատացին մեր դատարկ և անբովանդակ հայտարարություննե-րին, մեր կեղծ խոստումներին ու փոեցին մեր թշնամիների վոտքերի տակ իրենց ժողովրդին... մեկ միլիոնից ավելի զոհ... կանայք, ծերունիներ, յերեխաներ, հա, հա, հա... վոդորմելիներ... Այ-նուամենայնիվ գլխացավանքից պետք է աղա-տվել, պետք է միանգամ ընդ միշտ փակել մեզ վոչ մի շահ չխոստացող այդ խնդիրը... բայց ի՞նչպես, ի՞նչ միջոցով... (դիմում է քարտուղարին) Պարոն քարտուղար, չե՞ք կարող ցույց տալ մի ճանա-պարհ, մի միջոց ազատվելու համար այն համառ, կամակոր պարոններից, վորոնք գիշեր-ցերեկ հան-գիստ չեն տալիս ինձ, բնակարանիս շիմքից չեն հեռանում, ոձիքս բաց չեն թողնում: Կոտանք, Նրանք այժմ, կամ քիչ հետո գլուխները պետք է խոթեն և այստեղ ու սկսեն սպառնալ, աղերսել, պահանջել...

Գ. ՔԱՐՏՈՒՂԱՐ. Հասկացա, հասկացա... Ձերդ դերադանցության խոսքերը, անշուշտ, այսպես կոչված հայկական խնդրին ու հայ պատվիրակությանն են վերաբերում, այնպես չէ...

ԿԼԵՄԱՆՍՈՒ. Այո, այո: Ճիշտ այդ անիծված խնդրին, այդ հայ պատվիրակ կոչվող պարոններին... Ինչ-վոր Պողոս Նուբար, Ահարոնյան... ուղղակի դահլա տարան...

ՔԱՐՏՈՒՂԱՐ. Հա, հա, հա... Ի՞նչ կա ավելի հեշտ, քան այդ պարոններից ազատվելը: Դա մեզնից ուրախ ժամանցի միջանի ընկերներ կարող ե խելի և ուրիշ վոչինչ...

ԿԼԵՄԱՆՍՈՒ. Այսինքն:

Գ. ՔԱՐՏՈՒՂԱՐ. Միթե հասկանալի չե... Անհրաժեշտ է միմյան մի փոքրիկ դիվանագիտական կատակերգություն սարքել՝ ազատվելու համար թե այսպես կոչված «հայոց հարցից» և թե այդ հայ պատվիրակներից... Իմ միտքն այժմ հասկացա՞ք...

ԿԼԵՄԱՆՍՈՒ. Ի՞նչ եք առաջարկում, ասացե՞ք պարզ:

Գ. ՔԱՐՏՈՒՂԱՐ. Ասեմ: Իրենց հայ ազգի ղեկավար հորջորջող այդ պարոնները, ինչպես դիտեք, մի չափազանց միամիտ և կույր հավատ ունեն դեպի մեզ: Նրանց մենք քանի-քանի անգամ խաբել ենք... բայց այնուամենայնիվ շարունակում են վերստին հավատալ մեզ ու մեր դատարկ խոստումներին... Մենք պետք է ոգտվենք նրանց հենց այդ բթամտությունից ու տխմարությունից: Նրանք հենց վոր կերևան այստեղ՝ մենք նրանց չափազանց սիրալիր ընդունելություն ցույց կտանք, ապա նիստը բացվելուց հետո որակարգի առաջին խնդիրը

«հայոց հարցը» կդարձնենք և թույլ կտանք, վոր նրանք իրենց բաղձանքներն արտահայտեն դուք, իհարկե, պահպանելով ընդունված ձևականությունները, կոնֆերանսի անունից կհայտարարեք վոր ընդունում եք Հայաստանի անկախությունը, և ինչ ել վոր պահանջելու լինեն հայ պատվիրակները կհայտնեք վոր լիովին բավարարում եք... հա, հա, հա... այնուհետև թող յերթան և վերջստին քաղցրիկ յերազներով դրոբեն իրենց ու իրենց ժողովրդին, յեթե, իհարկե, այդպիսին դեռ գոյություն ունի, հա, հա, հա... Հա, մոռացա սեկայն հայտնել, վոր այս մասին անհրաժեշտ է նախապես իմաց անել դաշնակից պետությունների ներկայացուցիչներին, միատեսակ վերաբերմունք ունենալու համար հայ պատվիրակություն հանդեպ... Այսքան: Հավանում եք, հա, հա, հա...

ԿԼԵՄԱՆՍՈՒ. Հիանալի յե... Միակ արմատական միջոցը այդ քաղաքական մանուկներից իսպառ ազատվել կարենալու համար... Դիվանագիտական կատակերգություն, հա, հա, հա... այսինքն դիվանագիտության մեջ ընդունված սովորական խաղերից մեկը, այնպես չէ, հա, հա, հա...

ՏԵՍԻԼ Բ.

Մտնում ե սպասավոր:

ՍՊԱՍԱՎՈՐ. Ձերդ գերանցություն, դաշնակից ներկայացուցիչներն արդեն յեկել են և սպասում են հայելիի դահլիճում:

ԿԼԵՄԱՆՍՈՒ. Իսկ այսպես կոչված հայ պատվիրակները
հո ներս չեն պրծել նրանց հետ:

ՍՊԱՍԱՎՈՐ. Վոչ, Ձերդ գերազանցություն:

ԿԼԵՄԱՆՍՈՒ (հանգիստ զննում է Քարտուղարին).

Հաճեցեք առաջնորդելու այստեղ դաշնակից պե-
տությունների ներկայացուցիչներին: (Քարտու-
ղարը գնում է: Սպասավորին). Լավ ստուգեցեք
ապարանքի մուտքերը. կարող ե պատահել, վոր
հայ պատվիրակները ժողովված լինեն զոնների մոտ:
Նրանց սկզբում կառավարիկներ հեռանալ, իսկ յեթե
համառեն և սկսեն աղմկել ու անհամություններ
սարքել՝ այն ժամանակ ներս կթողնեք և ինձ
անմիջապես իմաց կանեք: (Սպասավորը գնում է:
Մեհակ). Այդ նղովյալ «հայոց հարցը» և այդ հա-
յերն այնուամենայնիվ մեզ պետք են... մենք դեռ
շատ և շատ հաշիվներ ունենք մաքրելու մեր թը-
նամիների հետ... հայերի հավատարմությունից ու
հավատից դարձյալ պետք կլինի ոգտվել... Մենք,
իհարկե, նրանց վորեք բան տալ չենք կարող, ինչ
անենք, վոր նրանք մեր խոստումներից խաբվելով՝
իսպառ կկոտորվեն, կոչնչանան. չե՞ վոր վերջին
հաշիվով նրանց լինել-չլինելը մեզ համար գրոշի
արժեք չունի, հա, հա, հա... Բայց և այդպես ամե-
նաչնչին ուժերն անգամ չպետք է արհամարհել,
յեթե նրանք ձեր ունեւ շահերին վորեք ոգուտ
կարող են տալ... իմաստուն դիվանագիտությունն
այդպես է թեւադրում... Յեւ վերջապես ինչ մեծ
բան է՝ ընդունել բաղադրվարի, առերես զիջող
և սիրալիք լինել ու ապա մի ճարպիկ դիվանա-
գիտական կոմեդիայով վերջ տալ...

ՏԵՍԻԼ Գ.

Մտնում են Լյույ Ջորջ, Վիլսոն ու Գրանց
յետեվից դառնակից պետությունների մյուս ներկայա-
ցուցիչներ: Կլեմանտն մուտքի առաջ սիրալիք ձեռք է
տալիս ամենեկն յեւ հրավիրում նստել: Ամենքը նստում
են: Քարտուղարը բռնում է իր տեղը: Հեռվից հան-
կարձ հագիվ լսելի ձայներ. «Ներս թողեք ձեզ ասում
ենք... ասելիք ունենք, ներս թողեք...»:

Մտնում է սպասավոր:

ՍՊԱՍԱՎՈՐ. Ձերդ գերազանցություն, այն արևելյի-
ները գլխավոր մուտքերի մոտ սկսեցին աղմը-
կել ու պահանջել վոր ներս թողնեմ: Յես տեսա,
վոր դժվար է համոզել նրանց հեռանալու՝ կար-
գադրեցի ներս թողնել ինչպես հրամայել էյիք:
(Դյուլիս է տալիս յեւ դուրս գալիս):

Կլեմանտն փութանակի մոտենում է ներկայացու-
ցիչներին յեւ սկսում է արագ-արագ ինց-վոր բանի
մասին խոսել Գրանց հետ: Հանկարծ բոլորը միասին
սկսում են հռնոտալ:

ԼԼՈՅԴ ՋՈՐՋ. Դիվանագիտական կատակերգություն,
հա, հա, հա... այսինքն մի սովորական խաղ, վոր
անկարող է շոշափել Բերմինգհամի և Լանկաշիրի
կապիտալի մագնատների շահերը, հա, հա, հա...
(Հանկարծ հեռվում սկսվում է աղմուկ, վոր հե-
տըզհետե ուժեղանում է յեւ մոտենում):

ԿԼԵՄԱՆՍՈՒ (արագությամբ վերադառնում է իր տեղը:
Քարտուղարին). Հրավիրեցեք...

Քարտուղարը գնում է:

Մտնում եմ Պաղոս Նուբար յեվ Չոպանյան ու
 քիչ հետո Ահարոնյան յեվ Փափազյան: Կլեմանտոն
 գլխով քեքեվակի բարեվում է յեվ հրավիրում նստել:
 Հայ պատվիրակները նստում են:

Պաուզա մի քանի վայրկյան:

ԿԼԵՄԱՆՍՈՆ (կարճ գսնգահաբեղուց հետո). Պարոնայք
 դաշնակից պետությունների ներկայացուցիչներ,
 Վերսալի կոնֆերանսի առաջին նիստը հայտա-
 բարում եմ բացված: (Բոլոր ներկայացուցիչները
 ծափահարում են):

ԿԼԵՄԱՆՍՈՆ (Բարտուղարին). Բարե յեղեք ծանոթաց-
 նելու կոնֆերանսին որակարգի խնդիրների հետ:
 Գ. ՔԱՐՏՈՒՂԱՐ. Որակարգի առաջին խնդիրն է (ձայ-
 նը բարձրացնելով յեվ հեզմակամ նայելով հայ
 պատվիրակներին) հայոց հարցը... (հայ պատվի-
 րակները ուրախ-ուրախ նայում են իբար ու ժրպ-
 տում: Այդ ժամանակ ներս է մտնում սպասավո-
 րը յեվ Կլեմանտոնին հանձնում մի քուղը):

ԿԼԵՄԱՆՍՈՆ (կարդում է քուղքը, ապա բարձրաձայն).
 Պարոնայք, Մեկիք Շահնազարյանը, Ղարաբաղի
 պատվիրակը դուրսն է և խնդրում է իրեն ըն-
 դունել: Յես առաջարկում եմ չմերժել և ընդու-
 նել այդ հայ պատվիրակին ևս:

ԴԱՇ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ. Խնդրում ենք, խնդրում
 ենք... (Ահարոնյանը բարձրանում է տեղից յեվ
 կամենում է մի բան ասել, բայց կրկին նստում
 է տեղը):

ԿԼԵՄԱՆՍՈՆ (սպասավորին). Հրապարակե՛ք: (Սպասավո-
 րը դուրս է գալիս: Ներս է մտնում Մելիք-Շահ-
 նազարյանը: Նախագահը նստում է անում նրան
 նստել: Մել. Շահ. բեմամական մի հայացք ուղղե-
 լով հայ պատվիրակներին՝ նստում է նրանցից քիչ
 հեռու):

ԿԼԵՄԱՆՍՈՆ. Պարոնայք, խնդրե՛ք տեսա՛ք որակարգի
 առաջին խնդիրն և «հայոց հարցը»... (կեղծ ար-
 տահայտությամբ) Հայ ժողովուրդը... ո՛ր, դա Ա-
 րևելքի ամենահին քրիստոնյա ժողովուրդն է,
 վոր ոժտված է մեծամեծ առաքինություններով...
 դա այն ժողովուրդն է, վոր պատմության ըն-
 թացքում, տակավին թաշակրաց արշավանքների
 ժամանակներին բազմաթիվ անգամ խոշոր ծա-
 առություններ և մատուցել մեզ, յեվրոպացիներ-
 իս, մի ժողովուրդ, վոր այժմ ևս պատրաստ է
 իր վերջին շունչը փչելու մեզ համար... պարոն-
 ներ, հանուն իրավունքի և արդարության նման
 մի ժողովուրդի մենք պետք է ընձեռենք որինա-
 կան հատուցումներ... (Հայ պատվիրակներին).
 Դուք կկամենայի՞ք արտահայտվել:

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ (նախագահին). Միմիայն միջանի
 խոսք...

ԿԼԵՄԱՆՍՈՆ. Խնդրեմ:

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ (ծանր ֆայլերով բարձրանում է ամ-
 բիոն: Խոսելուց առաջ հազում է). Պարոնայք,
 յես ըլլալով համայն հայոց կողմի ընտրյալ վե-
 հափառ կաթողիկոսի լիազոր պատվիրակը՝ կրնա՞ք
 վստահիլ, վոր կներկայացնեմ տիեզերասփյուռ
 հայ աղջիկն հավաքական կամքը և բազմաճանաչ
 իսկական արտահայտությունը և վոչ Ահարո-

նյաանի ու ընկերաց պես նշանակյալ ինքզինքն
Հայաստանի կառավարութիւնն հորջորջող ինք-
նակոյ բաղդախնդիրներու, ջարդարարներու և
ուղուրփաթորներու խմբակն մը... (Զոպանյանը
ծափահարում է, իսկ Ահարոնյանը յեւ Փափագյա-
նը սկսում են աղմկել):

ԱՀԱՐՈՆՅԱՆ (տեղից վեր բռնելով). Սուտ ես խոսում,
լիրբ... դու... դու... սուլթան Համիդի ախոռնե-
րի մեջ գիրացած մի հաստավիզ խոզ ես... քո և
քո կաթողիկոսի...

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ (զսպված կատաղությամբ). Լռի՛ր,
ավագակի ծնունդ, քեզ պես հիսուն ծառա ունիմ
իմ տանը:

(Աղմուկ մի քանի վայրկյան, Կլեմանտն գանգա-
հարում է):

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ (յերբ աղմուկը դադարում է). Յես
լիազորված եմ պահանջելու, վոր դաշնակից պե-
տութիւններու հանդեպ մեր կատարած մեծամեծ
ծառայութիւններուն ի տրիտուր՝ ստեղծեք ա-
նանկ Հայաստան մը, վորուն մեջ միացած ըլլա
Զանկեզուր, Ղարապաղ (Մելիք Շահնազարյան
վեր-վեր բռնելով. Հի՛նչ, հի՛նչ), Թրքահայ վեց
վիլայեթներ և Կիլիկիա... Մի խոսքով յես կպտ-
հանջեմ Սև Ծովեն մինչև Միջերկրականը Հա-
յաստան մը ստեղծվի, ուր աշխարհացրիվ հայ
հարուստները ժողովվելով՝ ի վիճակի ըլ-
լան իրենց քափիթալը շահեցնիլ: Ատանկ մեծ
Հայաստան մը շահավետ և ձեռնտու պիտի ըլլա
անշուշտ նաև ձեզի համար: Դուք հոն պիտի
կրնաք մուծիլ նաև ձեր քափիթալը: Հայաստանը

հանքերով և հում նյութերով հարուստ յերկիր
մըն է ու վոր գլխավորն է՝ չափազանց հեռա-
մնաց և տգետ: Դուք կարող կըլլաք հնչին որա-
վարձով մը հայ գյուղացիին ու բանվորին շախ-
տերու, ֆարրիկներու, գործարաններու, արհես-
տանոցներու մեջ հյութաքամ ընել ու մեկին
հարյուր շահիլ... Յերկրին իշխանութիւնը խա-
ղալիք պիտի ըլլա ձեր ձեռքին: Հայաստանի կա-
ռավարութիւնն մեջ ձեր մեկ պղտիկ ներկայացու-
ցիչը ըստական է, վոր բոլոր հայ միւստրներուն
խաղաղնդակի մը պես խաղցնի վեր-վար: Վեր-
անմիտը կը համարձակի ընդվզիլ ձեր դեմ. Հի՛
վոր աշխարհին ամենն հզորները դուք եք...
Պարոններ, խոսքս վերջացնելն առաջ հույս կը
տածիմ, վոր հոս ժողովված դաշնակից մեծ պե-
տութիւններու ներկայացուցիչները վերոհիշյալ
շահավետ հանգամանքներու նկատառումներով
անկասկած միասնական դրական վորոշման մը
պիտի հանգին մեծ և միացյալ Հայաստան մը
ստեղծելու խնդրո շուրջը... (Դաւենակից պետ.
ներկայացուցիչները ծափահարում են, հայ պատ-
վիրակներից ծափահարում է միմիայն Զոպանյանը:
Պողոս Նուբարը գնում է տեղը):

ԱՀԱՐՈՆՅԱՆ (աղերսագին). Պարոն նախագահ, խընդ-
րեմ ինձ ևս թույլ տաք մի քանի խոսք ասելու...
ԿԼԵՄԱՆՍՈՒ. Խոսքը պատկանում է հայ պատվիրակ
պարոն Ահարոնյանին:

ԱՀԱՐՈՆՅԱՆ (արտասովոր բարձրանում է ամբիոն:
Սրբում է քաւիքնակով արցունքներ: Նրա ճառի
ընթացում դաւենակից ներկայացուցիչներն ամ-

բողջ ժամանակը գրադված եմ քառագոյնի գրե-
նությամբ)։ Պարոններ, յես յեկել եմ Հայաստանի
արյունաներկ լեռներէց, արցունքի հովիտներէց
և դուլուժի ձորերէց՝ հետս առած մեր հարյուր
հազարավոր հողորոված նահատակների աղիողորմ
աղաղակները՝ հալեցնելու համար ձեր անթա-
փանցելի և խորհրդավոր սրտի սառուցը, ար-
թնացնելու ձեր թմրած զգացմունքը և հիշեցնե-
լու ձեր ցարդ յերեսի ձգած խոստումները... Հա-
վատացնք, Հայաստանի զարուհն անչափ գրավիչ
ե և աննման, ամառը՝ հովասուն և դեղեցիկ, աշու-
նը՝ անսահման պտղառատ և սքանչելի, իսկ ձմե-
ռը՝ չափից դուրս արեւառատ և դուրեկան... Հա-
պա մեր յերկրի վիթխարի լեռները... Նրանց
սպիտակափառ գագաթները թաղված խրոխտ ու
մթաղին ամպերի մեջ՝ կարծեք վշտի և անեծքի
մի հավիտենական խորունկ դրոշմ ունեն իրենց
սևաթույր ճակտին... Ծի, այդ ամպերը... այդ
սևակնած, մութ ամպերը, վորոնք հայոց արցունք-
ներն առած իրենց կայծակնածեծ ուսերին տնքում
են, հառաչում և շառաչում անվերջ ու անմխի-
թէր... Իսկ Մեծ Մասիսը... այդ հսկան, վոր Ա-
րարատյան դաշտի փառահեղ զարդն է և հայ շի-
նականի հույզերի ու տաղերի վողեշունչ ալբյուրը,
չե՞ վոր նրա սրբազան գագաթին իջավ Նոյի տա-
պանը... Արարատյան դաշտ... Այդ գեղատեսիլ
դաշտի վրա ջրհեղեղից փրկված մարդկության
բեկորն ապրեցավ, աճեցավ և աշխարհիս չորս-
կողմը փռվեցավ ու ձեզ համար այսպիսի յերջա-
նիկ հայրենիքներ ստեղծեց...

ԱՆՈՅԻ ԶՈՐԶ (դաճակիցներին, Խրոխտ)։ Բաղդադի
յերկաթուղագծի կոնցեսիան պետք է հանձնվի
Անգլիայի իրավասութեանը...
ԿԼԵՄԱՆՍՈՒ. Իսկ Գերմանիայի Աֆրիկական գաղութ-
ները առանց այլևայլութեան Յրանսիային...
ԲԵԼԳ. ՆԵՐԿ. Զմոռանաք, վոր Բելգիան բաժին ունի
Գերմանիայի յերկաթից և քարածուխից...
ԻՏԱԼ. ՆԵՐԿ. Ուրիմս դուք կամենում եք զրկել Իտա-
լիային և վոչինչ չտալ մեզ...
ՎԻԼՍՈՆ. Միացյալ Նահանգները չեն կարող հրաժարվել
Խաղաղ Ովկիանոսի Գերմանական կղզիներէց...
(Մյուս դաճակից ներկայացուցիչներին մեջ զլծ-
գոնութեան շարժումներ)։
Ա.ՀԱՐՈՆՅԱՆ (իմեմաւոռացութեան յեւ հափտակութեան
մեջ տեսնում է Արարատ. դաւտի արեւայուսը)։
Ահա... դիտեցե՛ք... դիտեցե՛ք... աղաչում եմ ձեզ,
դիտեցե՛ք... Ահա բացվում է Հայաստանի ջինջ
և հոյակապ հորիզոնի վրա արշալույսը... Ո՛ր,
ինչքան դեղեցիկ, դուլթահրաշ, հմայիչ է այն...
Մասիսի գագաթը բուրբուղույն է ներկվել... յեր-
կինքը բոցավառված է կարծեք... Տեսե՛ք... բարձ-
րանում է հեղիկ հայոց արփին և նրա ճառագայթ-
ները վողողում են, վոսկեզոծում Արարատյան
դաշտը... Իսկ այնտեղ, այն դաշտի վրա յես
լսում եմ հազարավոր աղիտակների և արտուտիկ-
ների քաղցրահնչյուն դայլայլները... Ահ, հոգիս
սլանում է դեպի յերջանիկ, յերանապետ անհու-
նը, ուր այլևս չեն լսվում տանջանքների, վշտի
ու արյուն-արցունքի մեջ հեծկտացող տարա-
բաղդ ժողովրդի աղիողորմ աղաղակները, ուր

1651
1001

զուլումը, ան, զուլումը չե, վոր իշխում ե, յա
թաղանը չե, վոր հսկում ե և գնդակը չե,
վոր վճռում ե... (հանկարծ զգաստանում ե).
Ահավասիկ պարոններ, այն յերկիրը, վոր Հա-
յաստան ե կոչվում և միթե չարժե այնտեղ ապ-
րող-ժողովրդի համար մի ազատ, անկախ և ծո-
վից-ծով միացյալ անկյուն ստեղծել... կոչ եմ
անում ձեր մարդասիրությանը—ոգնեցեք մեզ...
(Ահառնյանը բաւականակն աջքերին բռնած գնում
ե տեղը):

ԿԼԵՄԱՆՍՈ (կարճատեղ պառկայից հետո. հայ պատ-
վիւհակներին). Պարոնայք, կարծեմ պարոն Պողոս
Նուբարի և Ահարոնյանի արտահայտած ցանկու-
թյուններին դուք ամենադեղ ել համակարծիք եք,
ուստի թույլ տվեք կոահելու, վոր ֆնացյալը
հրաժարվում եք խոսելուց...

ՀԱՅ ՊԱՏ. (Տեղերից). Այո, այո, համաձայն ենք, հա-
մաձայն ենք...

Մ.-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ (հանկարծ վեր բռնելով տեղից). Իտի
պէն չկա, յես համաձայն չըմ... յես համաձայն
չըմ, պարուն նախագահ, խնդրեմք ինձ մին
քայլմա խոսքի իրավունք տաս...

ԿԼԵՄԱՆՍՈ (դժկամակութեամբ). Համեցեք:

Մ.-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ (իմեմականաբար փայտով բարձրա-
նում ե ամբիոն: Հայ պատվիրակները նրա խոսե-
լու ժամանակ բարունակ դժգոհութեամբ բարձում-
ներ են կատարում). Պարոններ, յես ինքս Ղա-
րաբաղու ամենամեծ մեղքի՝ Մելիք Շահնազարի
ծուռներանըմ, բազմ, ինքս ել Շուշիա ղլին
գլավան: Մին խոսքով յես տիրացու Ահա-

րոնովին նման տափակ վարժարեղ չըմ, յա պա-
րուն Պուղուսին նման վիզըս հաստ, պայց խել-
քաս պերակ մարդ...

Պարուն Պուղուն ասից միթամ մունք ողը-
մընք վըեր Ղարաբաղը միացնիք Հայաստանին:
Ետ սոտ խոսք ա... Մունք գովալ չընք վըեր իտի
պէն ողինք... Մունք մեր շին, ավագ յերգիրը
կյուլերի, չախկալների ձեռք չընք տալ, վըեր
կրակ տան, դարբաղիւր անին...

Մեր ողածը մեր հինգ պապական մեղքու-
թյուններն... խնդրեմք ինձ հըստատիք իմ
քյոհնա իրավունքների մեչ և եղ հինգ մեղքու-
թյուններին տեր նշանակիք...

Ես մարթիքը (ցույց ե տալիս հայ պատվիրակ-
ներին) հինչ իրավունքավըն ողըմ վըեր Ղարաբա-
ղը Հայաստանին միացնին. Ղարաբաղը հնուց մեր՝
մեղքներիս պապական սեփականությունն ա և
մունք ետ սեփականությունը ձեռքից տվողը
չընք... Հինչըմ ասըմ, թա մեր ես հայերն ողըմըն՝
Ղարաբաղը Հայաստանին միացնիլի փութարեն՝
թող Հայաստանը միացնին Ղարաբաղին, յես ետ
նեղությունն ել հանձն կառնիմ... (Այս խոսքերի
վրա հայ պատվիրակները մեծ աղմուկ են բարձ-
րացնում):

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ. Ծն, ինչ կխոսի սա Ղարաբաղի յեր-
կարականը...

ԶՈՊԱՆՅԱՆ. Կորիւր ամբիոնեն, խելացնոր մարդ...

ԱՀԱՐՈՆՅԱՆ. Ցած իջիւր ամբիոնից, դավաճան, փոխա-
նակ Հայաստանի լավ կլինի վոր ձեր ավանակ-
ներին կառավարես...

ՓԱՓԱՉՅԱՆ. Պարոն նախագահ, ահանջ չդնեք այդ խելառն, վոր յեկել և այստեղ «հայոց հարցը» տապալելու դիտավորությամբ:

(Նախագահը անընդհատ զանգահարում է):

Մ.-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ (իջնում է ամբիոնից. բռնեցճե-
րը սեղմած կատաղությամբ նայում է իր հակա-
ռակորդներին յեվ տեղը վերադառնալուց տառաջ՝
խոսքը ուղղում է Ահարոնյանին). Ավանակը տուգ-
ըք, տուգ... աննամուսնե... ազգասիրությունը
փեշակ շինած դադրանիցա նըստալըք ազգին կա-
պեկնենըք լեփըմ—ապրըմ... Հայաստանըմ ել
սաղ տեղ չըք թողալ, սաղ յերգիրը վառալըք,
կրակ տվալ, բարբադ ըրալ, ժողովուրդին տոնը
կլխին քանդալ... մըհենդ ծեր միտքը հինչա...
ողըմըք վըեր մեր ավադ յերգիրն ել պըրշակ
անիք... իտի պին չկա... (գնում է տեղը):

ԿԼԵՄԱՆՍՈՆ (հայ պատվիրակներին). Պարոնայք, հայ-
տարարում եմ ընդմիջում, հայկական հարցի մա-
սին խորհրդակցելու դաշնակից ներկայացուցիչ-
ների հետ՝ վերջնական վորոշում հանելու համար:
(Դաճակիցները Կլեմանսոյի առաջնորդությամբ
դուռն են գալիս դահլիճից: Հայ պատվիրակների
մեջ սկսվում է աղմուկ):

ԱՀԱՐՈՆՅԱՆ (բռնեցճեքը սեղմած հարձակվում է
Պողոս Նուբարի վրա). Դու, փառամոլ սրիկա...

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ (պատրաստվում է պաշտպանվել).

Ինձի չմոտենաս, թե չե ատամներդ կը թափեմ...

Հայ պատվիրակության նախագահը յես պետք է
ըլլամ և վոչ թե քեզի նման դյադաները...

ՓԱՓԱՉՅԱՆ (փորձում է հարձակվել Պողոս Նուբարի

յեվ Չոպանյանի վրա). Մենք ձեզ ահաբեկման
կենթարկենք...

ՉՈՊԱՆՅԱՆ ՅԵՎ ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ (պատրաստվում են
պաշտպանվել). Չհամարձակվեք մոտենալ մեզի,
թե չե...

Մ.-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ (վոր մինչ այդ մի կողմ փախ-
դիտում է հայ պատվիրակների կռիվը յեվ շարու-
նակ ծիծաղում է). Կըտորվեցեք, կըտորվեցեք...

Աղմուկի տակ իջնում է վարագույրը յեվ մի-
յերկու վայրկյանից հետո բարձրանում,

ՏԵՍԻԼ Ե.

Մտնում են յեվ բռնում իրենց տեղերը Կլեմանսո,
Լյուդ Ջորջ, Վիլսոն, Իտալիայի ներկայացուցիչը յեվ
ապա մյուսները: Բռնում են իրենց տեղերը նայեվ հայ
պատվիրակները յեվ Մելիք Շահնազարյանը:

ԿԼԵՄԱՆՍՈՆ (բարձրանում է տեղից. հագիվ նկատելի
հեզակամ հայացք է ձգում հայ պատվիրակներին
վրա յեվ մի քուղք կեղծ հանդիսավորությամբ
բարձր բռնած՝ հայտարարում է). Պարոնայք մեծն
Հայաստանի ներկայացուցիչներ... (հայ պատվի-
րակները վտտի յեն կանգնում) Վեհաժողովը,
բաղկացած Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի,
Ամերիկայի, Յապոնիայի, Բելգիայի և մյուս
դաշնակից յերկրների ներկայացուցիչներից վո-
րոշեց ստեղծել միացյալ և անկախ Հայաստան...
(հայ պատվիրակներին) Կարծեմ սրանով լի ու լի
բավարարեցինք ձեր բաղձանքները, այնպես չէ...
յիսկ յեթե...

Մ.-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ (ընդհատում է). Ներողութիւն,
պարոն, բա Ղարաբաղի համար հինչըք ասըմ...

ԿԼԵՄԱՆՍՈՒ. Ախ, մոռացա... Ղարաբաղն ել տալիս
ենք ձեզ... (Հայ պատվիրակների մեջ դժգոհութեամբ
օտարումներ):

Մ.-ՇԱՀՆԱԶ. Ղ.թըթ... (սուտը գլխի յե բնկնում. հեգնա-
կան). Բա խե՞ ատաջ չասեցիր... Ետ թղտումը
յանի կըրիւած ա...

ԿԼԵՄԱՆՍՈՒ. Այո, այո... վստահ չեղեք...

Մ.-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ (մատը կծելով). Հը՞մ... (հասարա-
կութեան) Հը՞վատաք վընչ... Սրանք մեզ խափը-
մըն... հը՞մ... (Կլեմանսոյից, հեգնանով) շնորհա-
կալըմ ձեր լավութեան համար... հը՞մ... (ղուրս
է գալիս):

ԱՀԱՐՈՆՅԱՆ. Պարոն նախագահ, դուք Ղարաբաղը
բաժանեցի՞ք Հայաստանից...

ՓԱՓԱԶՅԱՆ. Դա անկարելի չէ...

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ. Միանգամայն անհանդուրժելի...

ԶՈՊԱՆՅԱՆ. Քալեք, քալեք յերթանք...

ԼԼՈՅԴ ԶՈՐԶ. Պարոններ, ինչո՞ւ յեք. խռովում, Ղարա-
բաղը տալիս ենք ձեզ:

ՓԱՓԱԶՅԱՆ. Իսկ Կիլիկիան:

ԿԼԵՄԱՆՍՈՒ. Նույնպէս:

ԶՈՊԱՆՅԱՆ. Իսկ Զանկեղուրը, Լոռին:

ԿԼԵՄԱՆՍՈՒ. Նույնպէս:

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ. Հապա թյուրքահայ 6 վիլայեթները...

ԿԼԵՄԱՆՍՈՒ. Բոլորը, բոլորը...

ԼԼՈՅԴ ԶՈՐԶ. Պարոններ, այդպիսի մի հակադաս
յերկիր Բնչպէս պետք է կարողանաք կառավարել
և պաշտպանել... Յեա վորչափ ծանոթ եմ, դուք

մի փոքրիկ ժողովուրդ եք և Կիսակիրթ ցեղերով
շրջապատված...

ԶՈՊԱՆՅԱՆ. Ատիկա մեր գիտնալու բանն է... Մենք
դենքի տակ կառնենք յերկու սեռի նորածիններն
սկսյալ մինչև 105 տարեկան պառաջները... հա-
կառակ պարագային կրնանք նաև զինել և վտաքի
հանել մեր բոլոր յերկոտանի և չորքոտանի կեն-
դանինները՝ այծերը, յեղները, վոչխարները, կո-
վերը, ձիաները, հովերը, ավանակները, գոմեշ-
ները և այլն, և այլն, և այլն... հասկացա՞ք...

հապա...
ԼԼՈՅԴ ԶՈՐԶ. Ո՛յ, ո՛յ, ո՛յ... վորպիսի ահուկի և հակա-
ուժ, վորին ինքը Անգլիան իսկ կարող է նախան-
ծել...

ՎԻԼՍՈՆ. Ամերիկան այլևս կարող է չվախենալ իր
թշնամիներից...

ԻՏՍԼ. ՆԵՐԿ. Վճրպիսի հզոր և անպարտելի դաշնա-
կից...

ԿԼԵՄԱՆՍՈՒ (թուրք դնելով սեղանին). Պարոններ,
հաճեցեք վավերացնել Հայաստանի անկախու-
թեան վորոշման արձանագրութիւնը. (Դաճեա-
կից ներկայացուցիցները մեկիկ-մեկիկ մոտենում
են յեվ վավերացնում. Հայ պատվիրակները ստու-
րագրում են ամենից վերջը):

ԱՀԱՐՈՆՅԱՆ (ստորագրութիւնը դնելուց նետո. ճախա-
գանին. զգացված). Պարոն նախագահ, թույլ տվեք
մեր բազմատանջ յերկրի, դժբախտ Հայաստանի
անունից հայտնել դաշնակից մեծ պետութիւն-
ների ներկայացուցիչների կոնֆերանսին մեր խորին
յերախառագիտութիւնը և սրտագին շնորհակա-

լուծյունը: Դուք ձեր այսորվա մեծ և պատմա-
կան ակտով հայ ժողովրդին վերջնականապես ա-
զատում եք էր դարավոր կապանքներից և դա-
տում ազատ և բախտավոր ազգերի շարքը... Հա-
վատացեք, ձեր՝ այստեղ ժողովվածներիդ անուն-
ները վոսկե տառերով պետք և արձանագրվին
մեր ազգի դժբախտ ու արյունոտ պատմության
վերջին լուսաշող եջերում... (ուրախությամբ
արտասվում է յեվ թափեցակր հանելով սեղմում
աչքերից):

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ (վզեկվում)։ Այո՛, ձեր՝ ազատա-
բարձրներիդ արձաններովը մենք կը զարդարենք
Հայաստանի քաղաքները՝ Շուշուց սկսած մինչև
Ալեքսանտրիտա...

Հայ պատվիրակները միասին յերախնագիտու-
թյամբ գլուխ են տալիս դաժ. ներկայացուցիչներին
յեվ դուրս գալիս: Դիտավոր քաղաքները նրանց յետե-
վից ցույց են տալիս «Բ Ի Թ»: Հայ պատվիրակները
դուրս գալուց հետո դաժնակից ներկայացուցիչները
միասին սկսում են անգուսպ կերպով հռ.հռ.ալ:

Հանգարս իջնում է վարագույրը.

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0333535

31.922